ԳԼՈՒԽ ԼԹ.

Վանք Ս. Սարգսի. Հակառակութիւն Յունաց: Բանալի այրին Ծնըն-դեան: Վանօրայք ազգաց յԵրուսաղէմ: Եկեղեցին Համբարձման: Գրիգոր Պարոն Տէր: Վանք Ս. Փրկչի, և գերեզմանատունն անդ:

ՎԱՆՔ Ս. Սարգսի կայր մնայր 'ի ձեռս կրօնաւորացն Յունաց: Սակայն յետ ժամանակաց ձանձրացեալ 'ի բըռնութենէ Արաբացւոց, վաճառեցին զայն Սերվիացւոց, և նոքա շինեալ նորոգեցին զաւերեալ տեղիս, եւ կանգնեցին աշտարակս և բուրգս, և կացուցին 'ի նոսա պահապանըս հսկել զցայգ և զցերեկ և զգուշանալ յարձակմանց Արաբացւոց, և այսպէս մնաց ժամանակս ինչ 'ի ձեռս նոցա: Այլ 'ի տկարանալ թագաւորացն Սերվիացւոց՝ չեղեն ձեռնհաս նորոգել զվանս, և այս տեւեաց ամս իբրեւ հարիւր, մինչ 'ի ժամանակս Տոսիթէոսի Յոյն պատրիարքի, (1504): Այլ 'ի թագաւորութեան Սուլթան Սէլիմայ Բ. Որդւոյ Սիւլէյմանայ, եկն յԵրուսաղէմ Նոր Բդեշխ, և կրօնաւորքն Սարգսի եկին առ նա յողջոյն, որք էին անձինք իբրեւ 1000. բերեալ ընծայս՝ և Բդեշխն ելեալ արտաքս ետես զնոսա զի զգեցեալ էին սեաւ սքեմս, և եհարց ցնոսա թէ ուստի իցեն, և նոքա ասեն. 'ի վանաց Ս. Սարգսի. և նա ասէ, ընկալայ զընծայս ձեր, սակայն ոչ կարեմ թողուլ զձեզ բնակիլ բազմութեամբ 'ի մի վանս, գուցէ ապըստամբիցիք և դժուարին լինիցի ինձ յաղթել վանաց ձերոց, որ ամրացեալ է իբրեւ բերդ ամուր, և դուք իբրեւ զինուորք փառաւորք, և յետ խորհելոյ ընդ բարեկամս իւր, հրաման ետ Ենիչէրի զօրաց կոտորել զնոսա 'ի բերան սրոյ, որոշեալ 'ի նոցանէ զարս իբրեւ քսան: Եւ Լատին ճանապարհորդն գնացեալ 'ի վանս նոցա, եգիտ միայն 30 կրօնաւորս. (1570):

Բարուկիր ձեղունն 'ի վերայ մեծի դրան տաճարի Ս. Յարութեան 'ի ներքոյ վերնատան Հայոց. որոյ մի ծայրն հաստատեալ կայր 'ի վերայ Գողգոթայի և փակեալ դրան, 'ի հնութենէ շինուածոյն յանկարծ քայքայեալ